ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1948 թվի հունվարի 12-ին ՀՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ս. Կարապետյանի նախագահությամբ տեղի ունեցավ հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի նշանավորման ռեսպուբլիկական հոբելյանական հանձնաժողովի նիստը։

Հանձնաժողովը լսեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանի, Արվեստի Գործերի Վարչության, Հայաստանի Սովետական Գրողների Միության, Կուլտուր-լուսավորական հիմնարկությունների Գործերի Կոմիտեի և Հայկական ՍՍՌ Կինեմատոգրաֆիայի Մինիստրության ներկայացուցիչների հաղորդումները և հաստատեց Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի նշանավորման առթիվ ներկայացված միջոցառումները։

Հանձնաժողովը հանձնարարեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային, Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանին և Հայպետհրատին՝ հանձնաժողովի հաջորդ նիստում ներկայացնել Խաչատուր Աբովյանի կյանքի, գործունեության ու ստեղծագործության վերաբերյալ գրքերի հրատարակման պլանը։

Հանձնաժողովը ընդունեց Ակադեմիայի և Պետական համալսարանի աշխատողներին Թբիլիսի, Մոսկվա, Լենինգրադ և Տարտու քաղաքներ գործուղելու առաջարկը՝ հիշյալ քաղաքներում Խաչատուր Աբովյանի դտնվելու հետ կապված արխիվային նյութերն ու տվյալները հայտնաբերելու համար։

Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանը նախատեսել է հոբելյանական օրերին անցկացնել հատուկ սեսիա, որտեղ կարդացվելու են գիտական հանրամատչելի զեկուցումների ցիկլ, ինչպես նաև դասախոսություններ ուսանողության համար։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի Գործերի Վարչությանը հանձնարարվել է պատրաստել երգեցիկ խմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար հանդիսավոր կանտատա, երգեր, պիես և մի շարք գեղարվեստական երկեր։ Մասնավորապես նախատեսված է մասսայաբար պատրաստել Խաչատուր Աբովյանի կիսանդրիներ և քանդակներ։

Հայաստանի Սովետական Գրողների Միությունը եղբայրական ռեսպուբլիկաներին է ուղարկում մեծ գրողի ընտիր երկերի բառացի ռուսերեն թարգմանությունը և նախապատրաստում է պարբերական մամուլում հրատարակելու համար Խաչատուր Աբովյանի վերաբերյալ սովետական գրողների նոր աշխատություններ։

Կուլտուր-լուսավորական հիմնարկությունների Գործերի Կոմիտեն նախապատրաստական աշխատանք է կատարում բարեկարգելու Քանաքեռում գտնվող Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը, ինչպես նաև Երևան, Լենինական, Կիրովական քաղաքներում ու ռեսպուբլիկայի շրջանային կենտրոններում կազմակերպելու Խաչատուր Աբովյանի հիշատակին նվիրված ցուցահանդեսներ։

Կինեմատոգրաֆիայի Մինիստրությունը հոբելյանի առթիվ ստեղծում է հատուկ կինոակտավարկ՝ նվիրված Խաչատուր Աբովյանի կյանքին և մեծ գրողի գտնված վայրերում նկարահանումներ է կատարում։

Հանձնաժողովը լսեց բանաստեղծ Մ. Շերվինսկու կողմից «Վերք Հայաստանի»-ի ռուսերեն նոր թարգմանությունից հատվածներ և հանձնարարեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային վերջնականապես խմբագրել ներկայացված տեքստը՝ հոբելյանի առթիվ հրատարակելու համար։

Հանձնաժողովը նաև քննարկեց և հավանություն տվեց Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված նամականիշների սերիայի համար ներկայացված նյութերին և հանձնարարեց Արվեստի Գործերի Վարչությանը՝ մոտիկ օրերին ավարտել այդ նյութերի վերջնական մշակումը և նրանց ՍՍՌՄ Կապի Մինիստրության ներկայացնելը։

(ՀՀԳ)

***

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանում ռեկտոր Հ. Պողոսյանի նախագահությամբ կազմակերպվել է հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի անցկացման հանձնաժողով։

Հանձնաժողովն արդեն մանրամասն ծրագիր է մշակել Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը համալսարանում անցկացնելու համար։

Կազմակերպվելու են գիտական սեսիաներ, որտեղ զեկուցումներ են կարդացվելու «Աբովյանը որպես գրող», «Աբովյանը և աշխարհաբար լեզուն», «Աբովյանը հայկական և ռուսական հրատարակություններում», «Աբովյանը որպես մանկավարժ» և այլ թեմաներով։

Աբովյանի վերաբերյալ նոր նյութեր հայտաբերելու և մի շարք գիտա-հետազոտական աշխատանքներ կատարելու համար կազմակերպվում են գիտական գործուղումներ դեպի Մոսկվա, Տարտու (Դորպատ) և Թբիլիսի։

Պետական համալսարանի հրատարակությամբ մինչև հոբելյանի օրերը պետք է լույս ընծայվեն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Ա. Տերտերյանի «Խ. Աբովյանի սրտեղծագործությունները», դոկտոր-պրոֆեսոր Մ. Մկրյանի «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, դոցենտ Ս. Ղազարյանի «Խ. Աբովյանի լեզվական սկզբունքները», «Աբովյանը և աշխարհաբարը», ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Սեվակի, պրոֆ. Մ. Սանթրոսյանի և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Բազյանի Խ. Աբովյանի մասին աշխատությունները։

Կազմակերպվում է հոբելյանական մեծ ցուցահանդես, որն արտացոլելու է Աբովյանի դարաշրջանը և մեծ լուսավորչի կյանքն ու գրական գործունեությունը։

(ՀՀԴ)

***

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը մեծ նախապատրաստական աշխատանք է կատարում արժանավայել կերպով նշելու հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։ Ինստիտուտը ակադեմիական հրատարակությամբ լույս է ընծայում Աբովյանի երկերի լիակատար ժողովածուն 8 հատորով։ Այժմ արդեն լույս է տեսել 4-րդ հատորը, հրատարակության է հանձնված 3-րդ հատորը։ Շուտով պատրաստ կլինեն նաև 1-ին և 2-րդ հատորները։ 3-րդ հատորն ընդգրկում է «Վերք Հայաստանի» վեպը, որը լույս է տեսնում առաջին անգամ ուղղված տեքստով։ Մինչև այժմ եղածները սխալ ընթերցվելու պատճառով հրատարակվել են կոպիտ վրիպակներով։ Տեքստը համեմատված է ինստիտուտի Աբովյանի արխիվում եղած երկու ձեռագրերի (սևագիր և մաքրագիր) հետ։

Հոբելյանի օրերին կազմակերպվելու է գիտական սեսիա և լույս է տեսնելու հոդվածների ժողովածու՝ նվիրված Աբովյանին։ Սեսիան և ժողովածուն բազմակողմանիորեն պետք է լուսաբանեն Աբովյանի կյանքը, ստեղծագործությունը և գործունեությունը։

Ռեսպուբլիկայի հոբելյանական հանձնաժողովի հանձնարարությամբ կազմակերպվելու է մեծ ցուցահանդես, որը բովանդակելու է Աբովյանի կյանքն ու գրական ստեղծագործությունները։ Ցուցահանդեսում հատուկ բաժին է նվիրվելու «Աբովյանը և հայ ու ռուս ժողովրդների բարեկամությունը», «Աբովյանի ծննդավայրը» կամ «Քանաքեռ», «Աբովյանի Վերք Հայաստանի վեպը» և այլ բաժիններ։

***

Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյա հոբելյանի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի Գործերի Վարչությունը հայտարարել է Աբովյանի լավագույն պորտրեի (գունանկարչական, գրաֆիկայի և քանդակագործական) կոնկուրս, որին մասնակցում են ռևսպուբլիկայի նկարիչներն ու քանդակագործները։

Բացի այդ, կոնկուրսին մասնակցում են նաև ժողովրդական վարպետներ, ինքնուս նկարիչներ, կիրառական արվեստի ինքնուս վարպետներ, ասեղնագործներ և ուրիշներ։

***

ԿՈՏԱՅՔ.— Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ մինչև օգոստոսի մեկը կարգի է բերվելու և նորոգվելու Աբովյանի տուն-թանգարանը և նրա շրջակայքը։ Բարեկարգվելու է շրջկենտրոնը և նորոգվելու է Երևան-Սևան տանող ճանապարհը։ Քանաքեռի Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի դիրեկցիան մշակել է ծրագիր՝ դպրոցի աշակերտների համար Աբովյանի կյանքի և գրական գործունեության մասին զրույցներ ու զեկուցումներ կազմակերպելու։ Մինչև հոբելյանական օրերը զեկուցումներ են կազմակերպվելու նաև շրջանի մի շարք դպրոցներում, ինչպես նաև շրջկենտրոնի բանվոր-ծառայողների ու Քանաքեռի կոլխոզնիկների համար։ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի կապակցությամբ նրա տուն-թանգարանը դիտելու համար վերջերս ավելի է շատացել էքսկուրսիաների թիվը։ Միայն հունվար ամսվա քսան օրվա ընթացքում էքսկուրսիա են եկել Երևանից, Ստեփանավանի շրջանից, Վրաստանից, Օդեսայից և այլ վայրերից ավելի քան հազար մարդ։

***

ՄՈՍԿՎԱ.— Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի կապակցությամբ, ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության քարտուղարությունը որոշել է սեպտեմբերի 25-ին Երևանում գումարել ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության նախագահության նիստ՝ նվիրված հոբելյանին։ Հոբելյանի հետ կապված միջոցառումների անցկացման համար ընտրվել է հանձնաժողով, որի կազմի մեջ մտել են Ն. Տիխոնովը (նախագահ), Վ. Կիրպոտինը (տեղակալ), Ա. Շերվինսկին (քարտուղար), Ա. Իսահակյանը, Մ. Շահինյանը, Լ. Լեոնովը, Գ. Ֆեդինը, Պ. Սկոսիրևը, Հ. Քոչարը, Ստեփան Զորյանը և ուրիշներ։

Հանձնաժողովը Պետական գրական հրատարակչությանը առաջարկել է լույս ընծայել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը՝ Շերվինսկու թարգմանությամբ, ինչպես նաև հանրամատչելի կենսագրական ակնարկ ու մի գիրք Աբովյանի ստեղծագործության մասին։ «Октябрь», «Новый мир», «Знамя» և «Звезда» ժուռնալներն ու «Дружба народов» ալմանախը պատրաստում են մեծ գրողին նվիրված հոդվածներ։

Սեպտեմբերի կեսերին Գրողների ակումբում կկայանա Մոսկվայի գրողների ակտիվի նիստ՝ նվիրված հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի հիշատակին։

***

Հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ Հայպետհրատը լույս կընծայի մի շարք գրքեր։

Տպագրության է պատրաստվում մեծանուն գրողի հատընտիր երկերի միհատորյակը հայերեն լեզվով։ Այս հատորյակի մեջ կմտնեն «Վերք Հայաստանի» պատմական վեպը, «Թուրքի աղջիկը», «Առաջին սեր» պատմվածքները, բանաստեղծություններ, առակներ և այլ երկեր։ Գրքին կցված կլինեն ծանոթություններ։ Գիրքը բաղկացած կլինի 25 տպագրական մամուլից։

Ռուսերեն լեզվով լույս կընծայվի Աբովյանի հանրամատչելի բանաստեղծությունների և առակների ժողովածուն՝ Ս. Շերվինսկու թարգմանությամբ։ Գիրքը կազմում է Ռ. Զարյանը։

Լույս կընծայվեն նաև Խ. Աբովյանի կենսագրությունը մասսայական տիրաժով և հոդվածների ժողովածու՝ մեծ գրողի մասին։